


ԲԱՏԻՆԳԻՆ  
ՄՆԱՀԱՆԳՈՑ ՀԱՄԱՐ  
Տարեկան \$ 1.50  
Վեցամսեայ 0.85

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ  
Տարեկան 10 Ֆրանկ  
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Խմբագրութեան գրիւղում  
նամակ կամ ծրար ետ  
չեն վերադարձուիր:


ԳԻՆ 3 ՍԷՆՐ:



# Հ Ա Յ Ն

# Հայրենեաց

ՇՄԱՐԱՆՈՑՆԵՐ



ՀԱՅԻՆ  
ՄԱՐԵՆԱԿԻ  
AN ARMENIAN WEEKLY.

ՀԱՍՏԷ  
AMERICAN HAI PUBLISHING Co.  
209E. 23dSt., New York City.

Entered at the Post Office at New  
York as Second-Class Mail Matter

Subscription \$1.50 a Year.

## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԲՈՎԱՆԳԱՐԹԻՒՆ

Իրաճեալ Արիւն. — Ազգային Կրթ. Որբանոցի Կրթութիւն. — Օգնութիւն Հայ Որբակներուն. — Եամակ Ուսուցիչ. — Հայ Նահատակաց Հոգեհանգստեան Ս. Պատարագ և Սղահանդէս Ի Բրովիտէնս. — Ազգային Քրօնիկ. — Քաղաքական. — Ներքին Լուրեր. — Բանասիրական (Անցեալի Յիշատակները):

### ԴԱՐՁՆԱԿԱՆ ԱՐԻՒՆ

Ազգի լեզուի սրահներն դարձեալ կ'արիւնտար, ու ծաւի աշխարհին արիւնը փորտուած բազկերակէն դարձեալ կը վազէ...

Հայաստանէն գոյժեր կը հասնին, կրկին արիւն, կրկին կոտորած, Գործող հայրենին ձմրան սպիտակին տեղ կարմիր կը դառնայ...

Երէկ Պատրիարքը Սուլթանէն իրատէ մը կը ստանար, ու կիսաքնն Պատրիարքարան կը մտնէր և իւր պաշտօնը կը վերստանանէր, Մայր եկեղեցիի բեմէն գոհունակութեան քարոզ մը կը արձակուի:

Այլ Սուլթանին իրատէն հրատարակուած էր, շատ մեծ բան մը շէր, բայց զէնք անով ալ գոհ կըլլային, թէ և ոչ ոք կրնար հաւատարմ Սուլթանի իրատէ կոչուած մեծած սառել գործարարութեան, զի հաւատ ընծայողն պատմութիւն կը դաւաճանէ:

Սուլթանի «ողորմած» իրատէն!!!, Օ՛ր, ի՞նչ դառն երգիծանք Հայ ազգի երեսին: Ամեն անգամ երբ Ներսիսի «բարեգութի» իրատէ մը կը ծնի, սրտի սարսուռով մը կը կարդամ այն տողերն, որոնք շինել, բարեկարգել, արտօնել կը խոստանան, զի յաջորդ արևածագին Հայաստանի արևը կը կարմիր... կը պողաբերին մեր դաշտերը մարտիրոսներու արիւնով ոռոգուելով:

Հանգիստ կուզէք, կըսէ Մեծ Մարդասպանը, առէ՛ք ձեզ խոստանալից իրատէ մը, բայց իմ հըու կամակատարները գիտեն կարգաւ իմ հրամաններս. դուք ուսանեցէ՛ք, եթէ տարիներէ ի վեր դեռ չկրցաք իմ լեզուն հասկնալ, անոնք կը հասկնան, անոնք ձեզ խաղաղ հանգիստ կը պարգևեն: Ինքս անդորրութիւն կը սիրեմ, առէ՛ք ձեզ անդորրութիւն... կենեքի:

Մարդասպանին իրատէն, խոստում, ջարդին կարասիան է:

Արդ, շահեցանք թէ տուժեցինք, իրատէն կը խոստանար երթեալները արտօնել, բանասիրականներուն ներում շնորհել, աւերակ վանքերն ու եկեղեցիները շինել և նպաստել(?) որբանամ գործին:

Ամեն ինչ գործադրուեցաւ և ելքաւորական արագութեամբ, երկար օրեր

Սուլթանին, եթէ ցայսօր շատերը շէրն համարձակեր ճանապարհորդել, իրատէն սիրտ առած՝ անցազիր խնդրելու ելան, և մարդասիրաբար ամենայն սիրով հիւրասիրուեցան բանտէն նոր ելնողներուն տեղ: Այլ հիմա աւերակներն կը շինուին՝ հիմէն քանդուելով: որբերը կը խնամուելն... նոր որբեր աւելացուելով...

Գեռ երէկ իրատէն, այսօր հեռագիր կը գուժէ Կարնի մէջ 50 հոգի սպանուած են, Քաջբերուելի մէջ Հիւսէյին և Էմին քիւրա փաշաները իրենց շահատակութիւնները կը շարունակեն: Գեռ երէկ իրատէն, ու այսօր հիւս ու նոր արշաւանաց վրէժը կը լուծուի, Քոսթուրի մէջ 300 հայ ջարդուելով:

Այլ ի՞նչ կուզէք, շէք պիտի Սուլթանին կենաց: Հայաստան կը բարեկարգուի, կը շինուի, կը իրազարկուի... կ'ամայնայ... հայերէ:

Գործող գողութիւնը: Եւ զեռական տիրացուական քաղաքագէտ յեղափոխականները, որոնք կ'անկախ են որ Պատրիարք մը կրնայ Մեծ Մարդասպանէն իրաւունքներ ձեռք բերել, բարեկարգութեան իրատէ ստանալ: Եւ Սուլթանի ձեռքէն: Որքան ողորմելի: Եթէ պատրիարքներով կրնար ազգ բարեկարգուել, ազատուիլ, Հայրիկի, Ներսիսի ու Իզմիրլեանի նման հայրենասէր ու կորովի պատրիարքներ ունեցած ենք, անոնք անկեղծ Հայու սըրտով կը սիրէին Հայրենիքի ազատութիւնը, բայց անոնք շատ լաւ հասկցած էին որ ժողովուրդի մը ազատութիւնը ժողովուրդէն կը ծնի: Անհատ, ըլլալ նա կաթիլով զիտու կամ պատրիարք իր դերը ժողովուրդի ոյժին վրայ կրթնեցնելու է, եթէ ժողովուրդը յենարան չկայ, ահա թէ ի՞նչ կը ծնի... Հայաստանի դաշտերը թող խօսին:

Ազգին պաշտելի անձնաւորութեան մը հետեւեալ սողներն ունիմ սեղանիս վրայ՝ «Պաշտօնական գիրքի» մէջ այնչափ յուսատու եւրոպայան վերջին պահուն անբացատրելի անխոհեմ կամք թողուց որ կոտորի, ջարդարի Հայ ազգն և քարոզքանք ըլլայ մեր անձկանաց պատուական հայրենիքը, և կը շարունակէ մնալ տակաւին նոյն անօրէն անտարբերութեան մէջ... Լաւ խորհեցէ՛ք, ըլլմտութեամբ ի նկատի առէ՛ք ժամանակը, պարագաները, ազգին անհանդուրժելի կացութիւնը... Անքն նշանակութիւն չունի հանգիստ ազգին գոյութեան անվթար պահպանման պէտքերն...:

Եթէ չկայ ժողովուրդի ոյժը, Պատրիարք ու պաշտօնական սող ոյժ չեն ներկայացնէր: Մենք արդար իրաւունք ունինք զայրանալու մեր Պատրիարքին գէ՛մ, խիստ կերպով քննադատելու դանի, երբ նա չի պահպաներ ազգին իրաւունքները, երբ նա կը խնայէ այն ինչ որ ձեռքէն կուզայ, և կընէ այն ինչ որ շահաւոր ու պատուաբեր չէ ազգին: Իսկ անկէ դուրս անկախել, որ Պատրիարք մը բարեկարգութեան յաջող ձեռք բերել, փառաւոր իրատէներով, փոխարէն սուր կիճնայ, դարձեալ արիւն...:



ԿՕՇԿԱԿԱՐ ՀԱՅ ՈՐԲԵՐԸ ԿԻՊՐՈՍԻ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՄԷՋ

Այդպէս անկախողները ծայրայեղ յեղափոխական ու սոցեալիստ անուններու տակ ծածկուողներն են, որոնք իրենց ողորուն շահեր ունենալով մէկտեղ՝ Արթիւն փաշաներու փառքի ու շահի հացին իւր կը քսեն:

Ատեն մը փորձուեցանք կարծել թէ ալ կոտորածները վերջ գտան, Սուլթանը հատիկ հատիկ կուզէ վերջացնել հայութիւնը: Տոյցերուն ալ շէրն պատասխաններ, Վանի սահմանալի զայս անցեալներ յեղափոխական խումբ մը կ'երկէր, սակայն անոնք միայն կը նահատակուէին: Մուշի Ցրօնք գիւղի մէջ խումբ մը քաղութեամբ դիմացաւ, քանի մը թուրքեր ալ ընկան, բայց թուրքը զանոնք կոտորելով բաւանանցաւ, անդին Ցրօնքի 4-500 տուն բնակիչներն անկախութեան թողուեցան: Իսկ այսօր, Այսօր կրք իրատէ մը կը շնորհուի, արդէն անցած ու նոր արշաւաններու վրէժը կը լուծուի, որոնք ժամանակին այնքան ծանր զոհեր տուած էին, և վաղն ալ միթէ Ցրօնքի վրէժը չպիտի լուծեն: Չարիքը, այդ շար պտուղը, միշտ անկախելու է թիւրքէն:

Ինչո՞ւ այս փոփոխութիւնը: Պարզ է: Բարեշնորհութեան պահանջել, հրապարակով Սուլթանէն դժգոհութիւն յայտնել է, իսկ որ և է զժգոհութիւնը նա արիւնով կը լուծեն. ու նոր արշաւաններ կուզան ողջունելու Սուլթանը, անոր սրին սահմանը ընդլայնելու...:

Սուլթանին ձեռքերը բարեշնորհման պատրուակով երկարացուցած աւերներ կը գործեն. բարիք մի՛ սպասէք անկէ, շարիք կը ծնի: Բանաստեղծը գուր չեք գեց՝ «Շատ խնդրեցինք, կողկողացինք ու լացինք». ա՛լ գուր է ու ծաղրելի: Թող տարօրինակ յեղափոխականները Պատրիարքի ձեռքով Մեծ Մարդասպանին խորքի տակնակներ, ժողովուրդի լըջամիտ դատարարքը, իր իսկ կողմակիցուած զօրաւոր ներքին ոյժին մէջ փրկուելու է իր ձգտումներուն գոհացումը:

Վ. ՇԱՀԷՆԻ

### ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ ՈՐԲԱՆՈՑ Ի ԿԻՊՐՈՍ

Տեղեկագիր Բ. Շրջանի (1898 Մարտ 1 — 1899 Փետր. 28)

Սոյն հաստատութեան Բ. Շրջանի տեղեկագիրը, զոր Որբանոցի Պատ. Տնօրինութիւն մեզ գրկած է, ուշադրութեամբ դիտողի մը խորին գոհունակութիւն կ'առթէ:

Կիպրոսի Հայկական Որբանոցը հիմնուած է Մանչեսթրի ազգայնոց խնամակալութեամբ և Տ. Վ. Բիրքեքեանի ջանքերով, որն այժմ կը վարէ որբանոցի Տնօրէնի պաշտօնը, իսկ Կիպրոսի մէջ կարող ազգայիններէ Տնօրէն խորհուրդ մը կազմուած է, աւելի մօտէն հսկելու սոյն հաստատութեան ներքին ղեկավարութեան վրայ:

Սոյն շրջանի Որբանոցն ունեցած է 45 աշակերտ, որոնցմէ 23 ձրկավարած է մի քանին ալ բարեբարուած: Որբերը կիլիկիոյ և Հայաստանի զանազան կողմերէն են:

Գարոցի ուսումնական մասին տեղեկագիր կը գրէ՝ «Առանց վարանելու կըրնամք ըսել թէ մեր ուսանողը այս միամեայ շրջանը կը բուրեն արդիւնաւոր կերպով: Բարեկրթութեան և վարուց մասին, նոքա առհասարակ ունեցան օրինակելի ընթացք. եւ գոհունակութիւն պատճառեցին իրենց հսկողներուն: Աւանդուած առարկաները յարմար ընտրուած և օգտակար են, և աւելորդ ութիւններով ծանրարեանուած չեն: Որբանոցի նպատակն է հետզհետէ բարձրացնել դպրոցի դասընթացը միջնակարգ դըպրոցի մը ծրագրին, որ կրնայ Կիլիկիոյ սպագայ սպագայ կեդրոնական դպրոցի կամ վարժապետանոցի ցանկալի նպատակն իրականացնել:

Որբանոցի մէջ Աւսումնական գուր կայ և Արձեւատական ճիւղեր: Ներկայ շրջանին սովորած են դերձակութիւն և կօշկակարութիւն սիակատար ձագործութիւն հարկ եղաւ դադարեցնել, առ այժմ, զըլխաւորապէս անոր համար որ աւելի կարեւոր գուժար մը ծախսուելու պէտք կը

տեսնուի՝ այդ ճիւղին վարպետի վարձքը և ատարձի գինը հոգալու»։

Որքանոցի ատարկան ծախքը եղած է 320 անգլ. ոսկի։ Որքի մը տարեկան ծախքըն է 50 տղար։

Գրպոսի կրթարան Որքանոց զուտ ազգային հաստատութիւն մ'է, հայրենիքին մաս, ուր որք մը ազգային հոգով կը մեծնայ։

Որքանոցի գործը ամենազարեալ նպատակներէն մինն է, և կիպոսի Հայկական Որքանոց ամեն վաստակութեան արժանիքը։

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՈՐԲԻԿՆԵՐՈՒՆ

Ի նպատակ Հայ Որբիկներուն «Բազմավէպ» բացատրիկ պրակ մը կը հրատարակէ։ Թերթին երկայնութիւնն է 42 հարկերու դասակարգ, լայնք 30 հարգ. մ. Թերթը կը թողարկուի 40 էջերէ, և ամեն էջ երեք լայն սիւնակներու բաժնուած է։

«Բազմավէպ» այս բացատրիկ լայնածաւալ մեծ թերթը կը հրատարակուի իրեն անգլերէնի «ՀԱՅ ՊԱՏԻՆԵՐԱՅԻՆ ԹԵՐԹ» մը, Illustration Armenienne, և ման եւրոպական մեծ ազգայն շարժական պատկերազարդ թերթերու։

Կը տպուի մի քանի հազար և ստակը պիտի յատկացուի Հայ որբանոցներուն։

Գինն է կանխիկ 2,50 Ֆր. 1 րբ. 50 անթ. Այս ծանուցագրով կը հրատարկուի մերազնեայ այն ամեն ազնիւ ու գեթած անձնաւորութիւնները, որ բաժանորդագրուելով այս բացատրիկ պրակին, համեստ լուծայ մը բարեհաճին ձգելու Հայ որբիկներու գանձանակին մէջ։

Բաժանորդագրաց անունն, և ով որ այս նպատակաւ որբիկներուն օգնութեան պիտի հասնի, հաւաքուած գումարը եւ որչափ պիտի յատկացուի իւրաքանչիւր որբանոցներու, պիտի ստուին «Բազմավէպ» պրակներուն մէջ։

Այս բացատրիկ թերթին մէջ կը տպուին նաև ծանուցումներ, մէկ տողի գինն է 25 անգլ. ֆ. Բազմավէպ փութան յղել իրենց ծանուցումները։

Մեր հասցէն է՝ Re'daction de la Revue "PAZMAVEB" (St Lazare) VENISE (Italie)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՆՑԵԱԼԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐԸ

Ազգ մը ու անհատը կը յիշեն անցեալը, կը խորհին անցիւոյն վրայ, և ուրախութիւն կամ տրտմանով դիպուածներն բնաւ չեն մոռցուիր։

Անհատը երբ իւր սենեկին մէջ կը փակուի միայնակ, բնականաբար իր անձնական խնդիրներն աւելի կը գրաւեն իր ուշքը և իրեն կենաց յաջող կամ ձախող պարագաներուն վրայ կը խորհի։ Բայց երբ մարդիկ մեծ բազմութեամբ կը հաւաքուին վայր մը իրր ազգութիւն, հոն խնդիրն բոլորովին կը փոխուի, հոն ամեն ոք կը մոռնայ իր անձը եւ կը սկսի հանրութեան վրայ խորհիլ։

Հոն է որ սրտեր իրարու կը վշտակցին ու կը կարեկցին, հոն ազգի մը անցիւոյն տխուր պատկերներն կը ներկայանան ամենու առջև։

Երբ կանարկ մը ձգենք մեր մօտ անցիւոյն վրայ ինչեր չեն արթննար մեր մտքի յիշողութեան մէջ, ո՛ր է մեր հայրենիք, ո՛ր են մեր եկեղեցիներ ու ժողովապետներ, ո՛ր մեր սիրելիներէն ու բարեկամներէն շատերը...։

Տարակոյտ չկայ թէ մէն մի անհատ սարսուռ կը զգայ ու ամենիւ աչերն ար-

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՈՒՍՏԻՆ

Գեկա. 4

Անցեալ Հինգշաբթի (Նոյ. 20) երեկոյեան Ս. Փրկչի ժողովարանը լեցուած էր խուռն երկուս բազմութիւն մը լսելու այն անձին, որուն Հայրը տարիներ առաջ Ուսման Առաքելներէն մին կրօնէք էր ի Հայաստան. ծերունի Հայրը ևս հաճած էր իր ներկայութեամբ պատուել Հայրը ժողովը և մի քաջակրօնական խօսիլ։ Յարեւելի ասանախօսն Հրապարակ Այնն իր խօսելիքները գլխաւորապէս կայացուց մի կարեւոր խնդրոյ վրայ «Մանկանց դպրանոց» շատ մը օրինակներով բացատրեց անոր կարեւորութիւնը քան աւելի գօղջնեւոր և համալսարաններու յիշեցուց թէ ազգի մը փրկութիւնը եւ երկարակեցութիւնը մանկանց դպրոցն է, նա է որմէն կը փախչին ագիտութիւնը և խաւարը ու ամեն ազգ, մանաւանդ Հայը՝ իւր գոյութիւնը պահելու համար ջանալու է իր ստեղծ այդ Հինգուոր առտիմանին վրայ դնել. սա այնպիսի ճշմարտութիւն մըն է, որուն դէմ ոչ ոք կարող է մի բան արտասանել, բայց մեր սրտեր այնչափ քարացած են որ ամեն այդպիսի խօսքեր «Չայն բարբառոյ անպատիւ» կը մնան։ Բաւական երկար տարիներ է որ Հայերն այս լուսաւոր երկիր բազմ օրոնելու եկած ենք. հարցում մ'է թէ ի՞նչ ստեղծ ենք և քրտմ մեր անձին և ազգին։ Այնպիսի պատահութիւն մը ներկայացաւ, որ կարծէ մի քիչ անցեալը պարզուի։ Որովհետեւ ինքն իրարից քաղաքացի մըն եմ, աւելի յարմար գատնեցի մեր և մեր գիւղացի եղբայրներու ընթացքին վրայ գրել։ Երկիր մը որուն երկարաբար ժողովուրդը աղքատ է եւ անուս՝ այն երկիր չը յառաջդիմելու է օր ըստ օրէ մահուան կ'ենթարկուի. մեր իրարեկցելի գիւղացին այս երկիր մ'ուս գտնելէն իզուր լաւ ըմբռնել է այդ իրողութիւնը եւ դարձունը ընելու հետամուտ եղած է. անոնք երկուսը բաժնած են մին՝ «վարկառոցներն իւրացնել, իսկ միւսն դպրոց»։ Ուրախ ենք ըսելու թէ իրենց քրտանց արդիւնքով շատ մը հողեր գնեցին, և շեն կրնար գտնել գիւղ մը որ իր զարգացը չունենայ՝ ստոնք արգիւնք են Ամերիկայի մէջ գտնուող բոլոր գիւղացի Հայրենակիցներու. շեն կրնար տեսնել տեղ մը, ուր միւսնոյն գիւղէն հինգ տար անձ գտնուին և իրենց գիւղի դպրոցին համար ընկերութիւն մը շունենան։ Այս բոլոր բաներուն պատճառ մը կայ թէ՛ իրենց իրենց վրայ շատ մեծ գաղափար չունին իրեւ դիւանագէտ-

ներ և պատերազմիկ ազգասէրներ. անոնք աւելի լաւ համարած էին Հ. Ալէնի օրինակին հետեւել՝ իրենց զգայուն և շատ քիչ խորհող անձանց առաջնորդութեամբը։ Բայց երբ կարգը մեր քաղաքացիներուս կուգայ, այն ասան ժողովարանի ճակատը գրուած «պարտք և իրաւունք» նախադասութիւն աչքին առաջ կը ներկայանայ եւ կը զգամ թէ ծանր պարտականութեան ներքեւ կը գտնուինք քաղաքացիներու. ամեն տեղի գիւղացիներ քաղաքացիներէն կը պատան իրենց մտքի և հոգեւոյ սնունդը. ուրախ եմ ըսելու թէ մեր գիւղացիներ լաւ հասկցան թէ՛ քաղաքացիէն ոչ մի յոյս կայ վաճակի այսօր եկեղեցի և ազգային ժողովներու մէջ միշտ քաղաքացին է որ իր բացակայութեամբ կը փայլի։

1892 թ. ամսոյն Ուսուցչին ընկերութիւն մը կազմեց և վերջացաւ 1894 ապրիլին. այժմ մեռած է, գոյութիւն չունի. քանիցս ժողովի հրաւիրուեցան, և նոյն իսկ Բրովիտէնսի(1) քաղաքացի ընկերութիւնն իր կողմէն Պր. Ալուճեան շրկեց ևս լայնի ջանքը ի դերու ելաւ։

Ընթերցողը թող չի դատմանայ երբ ըսեմ թէ այժմ քաղաքացիներն շատ գրագիտ ենք, շատերն ընտանեկնով ենք, և նշանակութիւն չունին ոչ մէկ ազգային գործ, երկրասարգներն ալ մեծ բաներու վրայ կը խորհնք, իսկ ամենքս մէկտեղ փափաքող ենք որ Եւրոպացիներ ազատէ Հայաստանը, և երբ ժնէրայներ, կառավարիչներ զրկուելու ժամանակը գայ՝ պատրաստ ենք երթալու. իսկ դպրոցի մասին խորհիլ հարկ չկայ, քանի որ Ամերիկային իր դրամով կը կրթէ մեր մտաւղ սեղանը և կը պահէ մեր որբերը։ Չգիտեմ թէ արժանապատուութիւնն ինչ որչափ ստորնացուցիչ որ այսօր մտաւորականներ և ձրիակներն դարձեր ենք, արեւօք իրողութիւններ չեն. եթէ քաղաքացի մը պարծի ըսելու թէ ժամանակու ուրիշ հարկեր ստուարի գումար մը քաղաքի կեցը. վարժարանին նպատուցելը, կը պարտաւորուի ըսել թէ քանի՞ անձինքն իր ստեղծ այդ դրամին եւ ոչ ոք են այն մարդիկը, եթէ հին ասուսուսան անկեղծ ազգասիրութեան մի փոքր կայծ մնացած ըլլար մեր սրտին մէջ, այժմ քաղաքացիներն որ ընկերութիւն մը ունեցած ըլլաւ էր. գէթ կարմրուել չափ ամշնալու ենք որ Բրովիտէնսի քաղաքացի ընկերութեան մէջ Պաղանցի Հայերն ալ կան։ Ամօթ մանաւանդ Ուսուցչի քաղաքացիներու. ժամանակու Գէորգեան ձեռնարանը և Պոլոս կեցրտ վարժարանները աշակերտներ զրկելու փափաքներ ու ձեռնարկներ ունէր, ի՞նչ կրան...

(1) Միայն Բրովիտէնսն է որ քաղաքացիք ընկերութիւն ունին։

Արդե՛օք Հ. Ալէնի խօսքերը մեր քաղաքացիներու վրայ իւր ազգեցեղութիւնն պիտի ունենայ։

ԲԱՂԱՔԱՑԻ ՄԸ

Հ Ա Յ Ն Ա Ս Ա Կ Ա Յ Հ Ո Գ Ե Հ Ա Ն Գ Ս Ե Ն Ա Ս Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ե Ն Ս Գ Ա Հ Ա Ն Գ Ի Ե Ս Ի Բ Ր Ո Վ Ի Տ Ե Ն Ս

3 Գեկա.

Հարիւր հազարաւոր Հայնահատակաց հոգեհանգստեան Ս. արարողութիւնը և Ս. Պապի հոգեհանգստեան համար՝ Պատ. Հոգաբարձութեան և ժողովարանի վարչութեան ըրած կարգադրութիւնները ընդհանուրիս գահուստեղութիւնն առկա ժողովարանը լեցուած էր խուռն բազմութեամբ մը, մտաւորապէս 500ի կը հասնէր ներկայից թիւը։ Պատարագը ըրած Պապ. Ղեկնող վարդապետ Մարգարէտեան եկեղեցական արարողութիւնները այն աստիճան կատարեալ և շքեղ ըրաւ, որ կարծես պահ մը մոռցած թէ Ամերիկայի Հայաստակ մէկ հօլին մէջ կը գտնուինք, անդին, հեռուէն, Հայաստանի փառաւոր եկեղեցիներու մէջ ըլլալ կը թուէինք, որոյ նուիրական պաշտամանը սուր պատարագութեան տակ՝ մարդս մարմնական էակ մը ըլլալէ դադարած կուգէ անմիջապէս հրեշտակային թեւեր առած վեր խոյանալ և աստուածային օրհներգութեանց ձայնակից ըլլալ։ Արժ. Հայրը իր քարոզի բնարան ընարած էր «Իւր քի Ստուռնոյ Տաճարները» և շատ գեղեցիկ կերպով բացատրեց Պօղոս առաքելի ըստած այդ ճշմարտութիւնը, և քրիստոնէական մեծ հայրենասիրական խանդով վառուած՝ հրաւիրեց ժողովուրդը մըտնել գործնական ապարեցիլն մէջ։

Իրիկուսն սգահանեցէսին աւարկայ եղող մեր նահատակաց կոտորածի միջոցին արեւնալի տեսանկյուն, վարդապետն պատերազմի, Հայաստանի նշանաւորներու ու այլ ազգային սրբերու նկարներն ու պատկերները եւ անոց պահպան կարծես՝ եզրին հրաշքներ մէջ մէկ կողմից կեցած՝ բեմի ճակատին ակնածելի կերպով մը սուած էին, բազմութիւնը նոյնն էր ինչ որ առուուին Տիկնաց Որբանոցը ընկերութեան հրեշտակային անդրանիկ հրապարակային երգեցողութիւնները բուռն ծափահարութեանց արժանացան. յարգ տեղւոյն մէջ այս պատկար շատ զգալի էր, իրենց յարատեւութիւնը տեղւոյն գաղութին վարդապետն մեծ մտապէս պիտի նպաստէ. Հայ մասնակցներն արտասանութիւններ իրեն, կրկու խօսուցիչ հակիրճ բանասիրութիւններով նահատակաց իշտատակութեան համար պատրաստուած այդ սգահանեցէսին նշանակութիւնը բացատրեցին Սէնթ-Քորթիսի և Տիկնաց երգիչ խումբը և ուրիշ անհատ երգողներ մերթ տխուր և

մերթ ոգևորումս վիճակի մէջ կը պահէին ժողովուրդը: Տիկին Հայկանուշ Զարարիան գրաւոր սրտի գայտոյ ճառով մը հանդիսակները յուզեց. Տիկին Ռ. Սարկուսի արեւն եւս ազդու բանաստեղծութիւն մը բերու. կարգը եկաւ մեր Արծ. Հի. րին, որը թէք անուտեան երկար արարողութեան յոգնած և բուական ալ տկար, սակայն սիրով յանձն առաւ իւր սիրած ու պաշտած ազգին անհատներուն այսպիսի յարմար պարագայի մը խօսիլ, որուն յատկապէս լուրու համար հաւաքուած էինք խոսուի ըստ մտածման: Երեք գլխաւոր կէտերու հրաւիրեց մեր ուշադրութիւնը 1.—Մեր նահատակները կրտսեղութիւն թէ անգիտակցօրէն, կարող կամ անկարող, ըրին ինչ որ կրնային կամ գիտէին թէ պէտք է ընել, և պակասը ընացուեալու համար մեզի թողուցին: 2.—Կոտորածը մեզի այն ճշմարտութիւնը սորվեցոյց թէ հաւաքական ու զինուորական ուժով պէտք է գիմարել թըշնամոյն: 3.—Թէ մենք հոս եկած ենք ոչ թէ լսելու ու գոհ մնալու, այլ մեր լըսածներու և զգացածները գործնականով ցոյց տալու: Հայաստանի բերան որ որբերու և թշուառներու վիճակը նկարագրելէ յետոյ առաջարկեց որ նախապես թիւն մը սկսին ինպատակով. առաջարկը մեծ ընդունելութիւն գտաւ, Տիկ. անոց Որբ. Հիկերութեան յանձնուեցաւ նախապես թիւնը ընել, որուն արդիւնքը եղաւ 107 տղարի գումար մը: Արտի անպատմելի ուրախութեամբ վերադարձուք տուն:

Ա. Ե. Ս. Ի

### ԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՒՆԻԿ

ՎԱՆԷՆ մեզ կը գրեն. — Հայր տագնապ օրէ օր սաստկանալ կսկսի: Ամբողջ տարին գրեթէ քիչ բացատրութեամբ, երաւատութեամբ անցաւ, որով անոց այն ալ թշուառ ժողովրդեան ապահով, հոգ աւ նեղութիւն կրկնապատկեց: Արդէն հունձքի ժամանակէ, և ամեն ոք անձկանք կուպտէր Հայրի ժամանակուն, 70 կայն ընդ հակառակ, հացի չափ 54 էն, 10 բարձրացաւ. գրեթէ քաղաքի կէս, այժմէն, առաջնորդարանէն և կամ ամերիկացի միտրոսներէն նպատակ կընդունին: Անկէ կարող էք երևակայել թէ ձմեռն ինչ արտաբերի պատահաններու պիտի առաջնորդէ...

Անցեալ շաբթու կարգ մը բանասերկաները կայսերական ներդաստնութեան նորժամանակով՝ ազատ արձակուեցան:

— Վանայ Սիգան գաւառին մէջ Պատրիարքարանի կողմանէ նոր սրբանոց մը հաստատուած և անոր հսկողութիւնն յանձնուած է Ազգ. Կաթողիկոսութեան:

պետեաններ և սոցա նման հայ ազգային բարեսէր անձնութիւններ: Այս, Ամառէն կը յաղթելու և իտայէլը յաղթող հանդիսանցներու համար Մովսէսներ և Յետոսներ պէտք են մեզ: Մեր խեղճ ազգը տգիտութեան և թշուառութեան լուծելու ընկճեալ է, Հայու ազատ քայլերն արգիլող ժանդարմա շղթաներն փրկող մեծ ասոյաններու կը կարօտինք: Կուսակցութիւն պէս մեծ մտքերու պէտք ունինք, մեր խաւարը յուսաւորելու համար Մարտինոս Լուսնարներ պէտք են մեզ: Հերթը որ ազգը թշուառութեան մատնուի. ազատ սեպուածներու բարձրացնելը ապագայ սերունդը: Ոյժ տանք յոկար թեւերուն, իրենամենք սրբերն, որք անօգնական մնացած են, քաջակերտք զիրենք որ հայրենեաց անշուք յարկն աւելի լաւ սփոփարան սեպն իրենց վրայ, քան օտարաց ապրանքները: Օտարներ չեն գիտար մեզ. անմահ Սարէն նար Պէյ իրեն ազգին ծանօթ մէկ երգին մէջ կըսէ՝ «Մի՛ դուք ձեր յոյս մի աւանդէք օտարին, մի խոր վերքեր ցուցանէք անգութին»: Բաւական է մեր ունեցած փորձառութիւններ, այլ ևս ուշաբերուելու ենք, մեր յոյս Աստուծոյ և մեր տոկուն բազմակերպի վրայ դնելով՝ կեանք և զօրութիւն ունենանք, սորվինք մեր իրաւունքը պաշտպանել: Ընենք մեր կրօնքը՝ մեր ազգը նախ ՏԳԻՏՈՒԹԱՆ և ապա

կան Տեղապահ Տ. Արսէն վարդապետին: — Սարբերէն շատ աղջիկներ Ամերիկա կը գաղթեն, կը կործուր թէ մոտենանալու համար կերթան:

Չէյթուելի մէջ նոր սրբանոց մըն ալ բանալու համար նպատակաւոր Յանձնաժողովէն օգնութիւն է խնդրուած, յայց Յանձնաժողովը իր սնտուկին անձուկ վիճակը ինկատի առնելով մերժած է:

«Բազմալէզ»-ի վերջին պրակը կը նկարագրէ իտալիոյ թագաւորի ու թագուհու Ս. Ղազարու վանք այցելելու Հոկա. Չիլի, որոնք շատ գուն ապաւորութեան տակ մեկնած են մենաստանէն: Վենետիկի ապարանք թագաւորին ընծայած է Սիտուանի գաղտնիքն թարգմանութիւնը, շեղ և սեկեղորու ազ կողմով:

Կարինի առաջնորդարանը կարնեյի և Բառնեյի երկու ընդունակ պատանիներ կը շրջէ Արմաշի գաղտնիքը, հոգևորականութեան պարտաւորութեան համար: Երկու սան ալ առաջիկայ գարունին պիտի շրջուին էջմիածին, Գեորգեան ձեմարանը:

Պատրիարքարանի Որբանոց մըն յանձնաժողովի նոյ 14ի նիստին մէջ խորհրդակցութիւն եղեր է որ այսուհետև փոխանակ լոկ զբաժանուի օգնութիւններ ընելու գաւառներն քանուած որբերին և կարօտեալներին, շրջուած գրամով առաջնորդարանները հսկողութեան տակ աշխատանք արուի անոց. օրինակ՝ զբերուած գրամներով նախնական իւրթեր գնուին՝ գորգ և այլն շինել տալու համար կարօտեալներին եւ իրենց գործին փոխարէն զբարութիւն և անոց շինած գործն ալ 4. Պոլիս և կամ այլ ուր որ զբերութիւն իրն ծախուին և այդ կերպով գրամագրութիւն մը կազմուի օգնութեան գործը շարունակելու համար, քանի որ բարեարարները նպատակները մշտական չեն և սկսած են նուազիլ:

Սալմաստէն «Արմէնիա»-ի գրուած թղթակցութեան մը կրմանք որ հին Գաղտնիկական յեղափոխականներ գիւշերով մտերին Ղալասար գիւղի մէջ հայ վաճառական Ա. Արդուսմանեանի տուն և բռնութեամբ 100 թուման առեր են, նոյն ի գործ գրած են և Հասարակեան և Շահապատեան երկու ուրիշ հարուստներուն, յայտարարելով թէ իրենց կեղծ կոմիտէի հրամանով կրնին այդ:

Յաւալի է յեղափոխական կեանքի այս տխուր երեւոյթը:

գերութեան շղթայէն ազատելու: Յարգենք անմահ մարտիրոսաց յիշատակները: Այսօր մեր սրտեր կրկին կ'արեւնին՝ սխտուր անցեալի յիշատակներն արթննալով մեր մէջ, սակայն չյուսահատինք, Հայ ենք, Հայու արիւն կրկնք. կանգուն մնանք միշտ, չզբերինք: Միջոցներ ունինք, մշակելուք մեր մտքեր ու գարգացնելուք մեր գաղտնիքները և վրէժխաղութեան ոգին ներշնչելուք նոր սերունդին: Թող մայրեր իրենց զաւակաց սովորեցնեն սիրել Հայութիւն, սիրել ազգը, սիրել իրենց եղբայրները: Չթողուեք որ օտարներու ազդեցութեան տակ մոռնան Հայու գիրն ու գաղտնիքն, առաջնորդեն անոց մատաղ մտքեր ճշմարտապէս մարդ ըլլալու փափաքով լեցուի. այն ատեն կարող պիտի ըլլայ ազգը բարձրանալ: Որովհետև ազգ մը կանգուն մնալու համար նախ իրական մարդերու պէտք ունի: Ուրեմն փարատանք խաւարն՝ որ լոյս տեսնելու և անք. այսպէս վեր կ'ընենք իսկուրէն զէպի ամպերը, մթնոլորտը, արևն ու աստղերը, զէպի գիտութիւն, զէպի քաղաքակրթութիւն, զէպի կատարելութիւն, ճըմարտութիւն և ազատութիւն:

Յաւալի երթանք կեանքի ասպարէզին մէջ, միշտ վառ պահելով ազգասիրութեան ոգին: Հայ ծնած ենք, Հայ ապրինք, Հայ մեռնինք: ՏԻԿ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԶԱՊԱՐԵԱՆ

### ՔԱՂԱՔԱՂԱՅ

«Նոր կեանք»-ի մէջ կը կարդաք. «Եւրոպայէն Պոլիս հաղորդուած ըլլալով թէ Երիտասարդ Թիւրքերը իտալիոյ նախկին Գարպոնարական գրութիւնովը կը կազմակերպուին, ուստի և ահաբեկիչ գործողութիւններ պիտի կատարուին Պոլիս, սուլթանը ահաբեկչոյ կողմ խաղաղութիւններ կատարել կուտայ թիւրքերու տունը, խանութները, սրճարանները. ու ինչ զէնք որ կը գտնեն կը վերցնեն: Մինչ այս տագնապը կը տիրէր ահա տալու առաջնակարգ իրաւունք իրենց գըլուխուններով Ձիպէտուլասը, Անգլիոյ զեռպատանուներ կերթան, և քառասուն իտալի ստորագրութեամբ թուղթ մը կը յանձնեն: Սոյ այցելութեան նպատակով և հեղք թուրքիոյ իտալիական հասակները Անգլիոյ յայտնել թրանսպարտի ինքզին առթիւ: Բայց ստորակոյս չի կար թէ թրանսպարտ պատերազմ մը ըլլալու էր. Պատգամաւորութիւնն ուղղակի Սուլթանին քաղաքակրթութեան զէմ գանգատելու կերթար: Գետապնք Թուրքիոյ արտաքին գործը նախարարին կրմայնէ ընդունած այցելութիւնը: — Ասոր համար կը հրաւիրուի երազի պատերազմ և Սուլթանին շնորհակարտութիւնները կընդունի իր «ուղիղ վարմունք»-ին համար:»

«Իրավի սը Բառի» իր նոյնմ. 15ի թուին մէջ շատ շահեկան ուսումնասիրութիւն մը ունի, զոր ընդհուպ պիտի ներկայացնենք մեր ընթերցողներուն:

Գիտման և Անգլիական թերթերը Սուլթանին մատարական վիճակը վերտանգաւոր կը ներկայացնեն: Պետական գանձարանը բարձրովն դատարի է. ամսական ոսոճիկները չեն վճարուի, յետին աստիճան շքաւորութիւն կը սկսէ թուրքերուն մէջ, ու բաժանուց կը մօտենայ, Սուլթանը շքաւոր սերկէ դրամ ճարել ու հանգարանցնել ընդհանուր գրգռումը: Երիտասարդ Թուրքերը թէ և ահա կազմակերպութիւն չունին, բայց Ապտիւլ Համիտ իր խանգարած երեւակայութեամբ սարսափահար է: Մեծ Մարգապանը այլևս վստահութիւն չունի իր անձնապահ Առաջնորդներուն վերայ: Ասոնք կատաղած են, որ Սուլթանը չի կրցաւ պատեղել իրենց հայրենակից կան պէյի սպաննելը: Այդ առնալուտները միտնգամայն շատ երես տեսած են. Սուլթանը կը վախայ որ ենիչէրիներու գերը կը կատարեն, որոնք սուլթաններուն ախրն էին, և գաղտնից կընէին զանոնք երբ իրենց հաճոյ թուէր: Սուլթան Մահմուտ ենիչէրինը ջնջեց. Համիտի ալ այդպիսի խորհուրդ մը կը վերաբարձուի: Ո՞վ աւելի արթուն պիտի գտնուի: Համիտ թէ ենիչէրինները:

### ՄԱԿԵԴՈՆԱՅԻ ԱՒԱԶԱԿԱՆՈՒՄԵՐԻ ԹՈՒՐԻՏԻՈՅ ՄԵՋ

Անգլիական Լայըլ շոգենուրը, որ երէկ յունական արշակազազուրի կղզիներէն — Սթրաթօնիէն հոս գտած է, հետեւեալ տեղեկութիւնները բերած է Մակեդոնական աւազակախումբի մը առեւանգումի մասին, որոնք կը կարծուի թէ հին Մակեդոնացիներու ցեղին կը պատկանին: Թուրքիոյ Սուլթանը այս պարագային վճարած է դրամը և յետոյ գտնենք ձերբակալու առեւանգ:

Լայըլ Սթրաթօնիէն մանկանկզի հանքով բռնաւորուած է: Մանկանկզը Էրիթրոնէն կը բերուի, որ հինգ մղոն հեռաւորութեամբ երկրի ներքեւը կը գըտնուի և փոքր երկաթուղիով մը կ'երթալու: Հանքային պաշտօնեայ Մ. Շվալիէ Սթրաթօնիէն Էրիթրոն կերթայ կղզի, որ թուրք պետութեան մէջ կը գտնուի: Լայըլ հասնելէն օր մը վերջ նա աւազակներէն կ'առեւանգուի իր պղտիկ տղուն հետ և իր ծառան ալ կը պահանուի: Չայն լիւրը կը տեսնուի և 16000 թուրքական լիթայի գումար մը կը պահանջեն: Գումարը պէտք է շրջուի յայտնի լեռնային անցք մը անցնելու մարդու մը հետ: Սուլթանը կը կատարէ այս պահանջը դրամն ուղարկելով:

Շվալիէ կազատուի և Բէսքո հասնե-

լուն պէս կը հրաժարի և կը մեկնի: Թուրք կատարելութեան լաւ տեղեկութիւններ կուտայ աւազակներու բնակավայրի մասին, որոնք քարաշէն էին կըսէ:

Չորքեր կուզարկուին Մակեդոնացիներու ետեւէն և անոնցմէ տարը հատը կը ձերք: Կալուին: Ասոնք կարճատեւ, սակայն մկանուս ցեղ մըն են: Փայտեայ սովորներ ունին, բրդեայ գուլպաներ ծուպերով իրենց սրունքները կը զարդարեն: Ստամբուլուն վրայ գտնուի կապած են, կարճ վերարկուներ կը հագնին և սրածայր գլխարկներ կը դնեն: Անոնցմէ իւրաքանչիւրը հրացան մը, սարձանակ մը և դաշոյն մը ունի:

### ԱՆԳԼԻԱ ԹՐԱՆՍԿԱՍԱՆԻ ԵՒ ԵՒՐՈՊԱ

Պատերազմը փութոյ պեղութեամբ յառաջ կը տարուի: Անգլիոյ փոխարանաւորը օրը օրին Անգլիան ու իր գաղթականութեան ամեն կողմերէն զօրք կը թափեն թէ նախ և թէ Բարձրասոյ գաղթականութեան մէջ:

Պօէրները, որոնց հետ Օրէնճի Ազատ Հանրապետութիւնը ոգի ի բռնի կը կըրուին, իւրաքանչիւր քալ յաղթութիւն ըլլայ՝ պարտութիւն արեան հեղեղով կը գնուի:

Անգլիոյ իր զօրքերը Հարաւային Աֆրիկէ համախմբելէն վերջ կուզէր յարձակողական դիրք բռնել և իր ստալին գործը պիտի ըլլար ազատել Լէյթի Սմիթը, ուր ձէնըրը Ուայթ երկար տանէ իվեր պաշարուած կը մնայ, Գիւպըրի, ուր Սիւրի Բոտո պաշարուած է և Մաֆէթիկ, ուր փակուած մնացած է Գօլէնէլ Պատէն ֆոլէլ: Իրա է որ Մոնէր գետի մօտ Լօրա Մէթուէնի յաղթութիւնը իր յառաջխաղացութեան իբր թէ յաղող քայլն էր, սակայն դեկտ. 11 ին ձէն. կաթաքերի կրած սոսկալի պարտութիւնը կուգայ ամեն բան տակն ու վրայ ընել:

Գեկա. 11ին Անգլիոյ պատերազմական նախարարը հետեւեալ հետազոտը հրատարակութեան տուաւ.

«Կաթաքը կը տեղեկագրէ. ցաւօք որտի կուգամ ծանուցանել թէ Լսթօրմպլըի վրայ յարձակման տակ իրստ մեծ ընդդիմութեան հանդիպեցայ:»

Յառաջապահ պահակներու առեւանգութիւն սխալ առաջնորդութեամբ՝ պատերազմը անկարելի եղող տեղույ մէջ ընկայ:»

Այդ հետազոտէն վերջ հեղեղեալ անգլիական մեծ պարտութեան մը լուրը հասաւ: Բիչ էր մնացած որ կաթաքի ամբողջ բանակը Պօէրներու ձեռք լինար, սակայն իր իւրաքանչեան ջանքով ձէնէրալը կարող եղաւ ազատիլ թակարդէն, որուն մէջ ինկած էր և նահանջելով գէպի հարաւ Մոլթիսո հասաւ: Անգլիացիներու կորուստն է 2 մեռեալ, 26 վիրաւոր և 605 գերի:

Յրանսական թերթերը թէ և իրենց յարձակու մեկուս մէջ ծայրայեղ չեն այս պարագայի, սակայն իրենց ասուրութիւնը զէպի Անգլիոյ սոկէ քանի մը շաբթ յառաջ այն աստիճանի հասաւ, որ Թագուհույն ծաղրանկարները շինեցին այլ և այլ ձևերով, այնպէս որ կատարութեան միջամտութեան հարկ պահանջեցաւ և ստիկանութիւնը գտնեց ծաղրանկարները: Թագուհին իբր հակահարուած մը այդ կրքոտ արարքին՝ սրուչեց այս տարի Նիո չերթալ, ինչ որ կը նէր իւրաքանչիւր արարուած ձմեռուան եղանակին, այլ իտալիա կրթալ:

«Ֆիկարօ» Ֆրանսական նախկին Ծովային նախարար Լօքուայի հետ իր մէկ ստեղծութիւնը կը հրատարակէ:

«Բրիտանական նուստարմիղը ըսած է սա, մերինէն կրկին անգամ մեծ է: Նա կարող է միևնույն ժամանակ դիմադրել թէ Ֆրանսայի և թէ երբեք Նիգալակցութեան նուստարմիղներուն: Ամենուրեք, ուր Ֆրանսական սորմիղ մը կայ, անոնք իրենց զէմը կրկինն ու Բոսպորի կը անին Անգլիոյ կողմէ: Ֆրանսան պէտք է իր ընդձովեայ հետազոտութիւն ունենայ: Մեծն Բրիտանիոյ բուլար այն տեղերը, որոնք իրեն թիկունք են, իրար կապուած են թերթով, և Բրիտանիացիները վաղը պատրաստ են կուռելու, եթէ հարկը պահանջէ, երկրազընդի ամեն մէկ ազգի հետ:

